

Քիւ 29898

Յուլիս 2, 1986

Նորին Սուրբ Օծութիւն
Տէր Տէր Վազգէն Առաջին
Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Սթոն Սուրբ Էջմիածին.

Վեհափառ Տէր,

Չելթրնհամ Փէնսիլվանիոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ
Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Մելգոնեան նամակով մը կը տեղեկացնէ որ տարւոյս
Հոկտեմբեր ամսուան ընթացքին պիտի նշուի նոր կառուցուած Եկեղեցւոյ օծման
20-ամեակը, եւ խնդրանք կը ներկայացնէ դիմել Ձերդ Սրբութեան՝ որպէս զի բա-
րեհաճիք Օրհնութեան Գիր մը շնորհել համայնքին համար նշանակալից այս տօնա-
կատարութեան առթիւ:

Կը ներփակենք համայնքի պատմականը՝ որ պատրաստուած է Եկեղեցւոյ օծման
առթիւ:

Մեծապէս շնորհակալ պիտի ըլլանք եթէ բարեհաճիք ընթացք տալ ներկայաց-
ւած խնդրանքին:


Կ'աղօթենք Ձերդ Սրբութեան առաւել բաջառողջ եւ արեւշառ կեանքին համար:

Մատչիմք ի համբոյր Վեհիդ Օծեալ Աջոյն
Խոնարհաբար

ԹՈՐԳՈՄ ԱՐԶԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Phone (215) 663-1600



HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH

101 Ashmead Road, Cheltenham, Pa. 19012

Very Rev. Haigazoun Melkonian
Pastor

June 19, 1986

Mr. Noubar Kupelian
Diocese of the Armenian Church
630 Second Avenue
New York, New York 10016

Dear Noubar:

Enclosed is a copy of the Consecration Booklet prepared 20 years ago. From it you may get some idea of what you need. We would like the Gontag to commemorate the 20th anniversary of the Consecration of Holy Trinity Church and perhaps the God-pleasing endeavors of her faithful parishioners. Thank you.

Sincerely,

Very Rev. Haigazoun Melkonian
Pastor

Enc.

Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՖԻԼԱՏԵԼՖԻՈՅ ԿԱՅ ԳԱՂՈՒԹԻ

Ա. ԾԱԳՈՒՄ ԵՒ ՍԿՁԲՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ.—

1850-ական թուականներէն ուսանելու նպատակաւ Ճիլատելիքիս եկած են կարգ մը Հայ անհատներ: Իսկ 1886-ին որոշ կերպով դիտենք թէ Պրն. Յովհաննէս Գէորգեան Ճիլատելիքիս եկած է եւ բնակութիւն հաստատած Հոն: 1895-ին շարժերու հետեւանքով որոշ թիւով Հայեր գաղթած են Միացեալ Նահանգներ եւ Ճիլատելիքիս ուր հետզհետէ Հայկական գաղութ մը սկսած է կազմուիլ: Առաջին կազմակերպեալ միութիւնը կրած է «ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ» անունը նպատակ ունենալով յարանական գրութեամբ խորհրդակցութիւններ կատարելու ազգային-մշակութային հարցերու շուրջ: Սոյն միութիւնը լուծուեցաւ 1930 թուին:

Բ.—ԳԱՂՈՒԹԻՒՆ ԼԱՍՏԱՅԵՐԻՆ ԿԱԶՄԱՌՈՐՈՒՄԸ.—

(Միացեալ համայնք — Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցի)

Ճիլատելիքիոյ Հայ եկեղեցական Համայնքը իրաւապէս գոյացաւ 1900 թուին Ամերիկահայոց անդրանիկ Առաջնորդ Գեր. Տ. Յովսէփ Եպս. Սարաճեանի այցելութեամբ, որ նշանակովի կազմեց Համայնքիս առաջին Հոգաբարձակամ կազմը հետեւեալ ձևով.—

Պրն. Յովհաննէս Օղանեան, Առեմապետ Կարապետ Օղանեան, Առեմապետ Մարտիրոս Կիւլոյեան, Գամապպա Սահակ Տէմիրճեան, Նազարէթ Տօնապետեան, Խորհրդակամներ

Իսկ 1902 թուին նոյն Առաջնորդ Սրբաբազանի կարգադրութեամբ գաղութս այցելեց Հոգ. Տ. Մաշթոց Վրդ. Փափազեան որ նախագահելով օրուան Միական Ընդհանուր Ժողովին գաղտնի քուէարկութեամբ վերոյիշեալ կազմը ընտրել տուաւ որպէս Ճիլատելիքիս Հայ գաղութի Հոգաբարձական անդրանիկ կազմը:

1902-էն 1912, թէեւ Ճիլատելիքիոյ Համայնքը կազմակերպուած, սակայն առկալին մը նայուն Հովիւ մը չունէր եւ ատեն ատեն այցելու եկեղեցականներ Հոգեւոր միթարութիւն կը ջամբէին հաւատացեալներուն: Յարմար նկատուած էր պարբերաբար այս արարողութիւնները կատարել Երզ ու պըթընուտի եպիսկոպոսական եկեղեցւոյ եւ յարակից ժողովարահին մէջ:

Առաջին Սեփական Եկեղեցին

(Պրոս եւ Փայք փողոցներուն վրայ)

Ճիլատելիքիոյ Համայնքի առաջին Հոգեւոր Հովիւը Արժ. Տ. Գեորգոս Բնյ. Վարդանեան քաղաքս կը ժամանէր 1912-ին եւ լրջօրէն կը լծուէր կազմակերպչական աշխատանքի շուտով կարենալ ձեռք ձգելու Համար սեփական եկեղեցի մը: Եպիսկոպոսական նոյն եկեղեցւոյ մէջ այլեւս ամէն Կիրակի Ս. Գատարազ կը մատուցուէր կազմակերպուած Դպրաց Դասով եւ սարկաւազներով: 1914-ին Միական Ընդհ. Ժողովի մը մէջ առաջարկ կը բերուի սեփական եկեղեցի մը ունենալու կարիքը, որուն Համար յատուկ յանձնախումբ մը կը կազմուի հետեւեալ անձերէն. (Տես նկար թիւ 1)

Սոյն անդրանիկ եկեղեցւոյնաց յանձնախումբը երկար աշխատանքէ ետք, Մարտ 21, 1917-ին կրցաւ ձեռք ձգել Պրոս եւ Փայք փողոցներու վրայ գտնուող եկեղեցին 12,000.00 տոլարի արժողութեամբ որուն վրայ 7,000.00 տոլար եւ ծախսելով զայն վերանկարելու հայկական եկեղեցիի: 1917 Մարտ 30-ին Ճիլատելիքիոյ առաջին Հայ եկեղեցին կ'օծուէր ձեռամբ Գեր. Տ. Մուշեղ Եպս. Սերոբեանի եւ կնքահայրութեամբ Յովհաննէս Մ. Թէմոյեանի, անուանուելով Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Հայց. եկեղեցի, Համայնքին պատճառելով աննախընթաց ուրախութիւն: Եկեղեցւոյ կալուածը, պաշտամունքի վայրերէն զատ, օտուած էր նաեւ սրահի, խորհրդարանի եւ ժողովարաններու յարմարութիւններով: Եկեղեցւոյն Հոգաբարձական եւ յարակից կազմակերպութիւններու վարչութիւնները շուտով օտուեցան նոր ուժերով ու Համանքային կեանքը մտաւ իր բնականոն հունին մէջ: Օրուան Հոգաբարձութեան անդամներն էին.— Արժ. Տ. Գեորգոս Բնյ. Վարդանեան, Հովիւ. Նազարէթ Կիւմրուկէրտանեան, Տրէնք Նահիկեան, Յովհաննէս Թէմոյեան, Մարտիրոս Կիւլոյեան, Արամ Ճէրրահեան, Կարապետ Օղանեան, Յովհաննէս Քալճեան, Երուանդ Սեդրոսեան:

Իսկ Տիկնաց Միութեան ժրջան անդամուհիներն էին.— Տիկ. Կիւլոյեան, Տիկ. Մերի Բարունակեան, Տիկ. Մամուրեան, Արամեան, Մաքրուհի Թիֆլէքճեան, Աղաւնի Զարդարեան, Աննա Ծոզալեան, Տիկ. Նահիկեան:

Դպրաց Դասը - ղեկավարութեամբ Տիկ. Կրկոյանի կը բաղկանար Տիկնք. Վ. Նահիկ-Լանէ, Ս. Գուռնազեանէ, Հ. Զարգարեանէ, և Վ. Թէմոյեանէ:

Սարկաւապներն կին. — Գրնք. Համբարձում Օհանեան, Մկրտիչ Ճսգալեան:

Ծիլատելիքոյ հայ Համայնքի միացեալ այս գեղեցիկ վիճակը տեսցց մինչև 1923 հոգեւոր հովուութեամբ Տ. Գետրոս Քննյ. Վարդանեանի, որմէ ետք հայ Համայնքի բնակչութեան ցըրուածութեան հետեւանքով Համայնքը, Առաջնորդարանի հաւանութեամբ, բաժնուեցաւ — Նորթ և Ուէսթ Ծիլատելիքոյ Համայնքներու:

**Գ. — ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՈՒՄ
ՆՈՐԹԻ ԵՒ ՈՒՒՍԴԻ ՄԻՋԵՒ
(6006 Ուլնըք փողոցի Հայոց Եկեղեցիմ)**

Ծիլատելիքոյ քաղաքի տարածուն վիճակը և հայ Հասարակութեան բնակչութեան ցըրուածութիւնը պատճառ կը դառնար որ շատեր զրկուէին Կիրակնօթայ պաշտամունքէ: Այս պարագան մտահոգութիւն դառնալով օգտակար տեսնուեցաւ եկեղեցիին տեղը փոխել: 1923 Սեպտեմբեր ամսուն Միսական Ընդհանուր ժողովի օրակարգի կարեւոր հարց եղաւ Գրոս և Բայքի Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցւոյ չէնքին վաճառումը և նորի մը գնումը: Լուրջ խորհրդակցութենէ ետք կ'որոշուի ընթացք տալ առաջարկին և արտօնել օրուան հոգաբարձութիւնը որ ծախէ Համայնքին սեփականութիւնը եղող եկեղեցւոյ շէնքը և նոր մը գնէ աւելի յարմար վայրի մը մէջ: Հոգաբարձութիւնը այս պարագան կը հաղորդէ Այգ. Առաջնորդարան և կը ստանայ Առաջնորդ Գեր. Տ. Արքեպս. Տ. Յովհաննիսեանցի վաւերացումը: Եկեղեցին կը ծախուի 30,000.00 տոլարի Հոկտեմբեր 4, 1923-ին, և զաղութը կրկին անգամ կը մատնուի թափառական վիճակի:

Քաղաքիս հայ բնակչութիւնը հետզհետէ կը կեդրոնանար կամ հիւսիսային Ծիլատելիքոյ և կամ քաղաքի արեւմտեան մասին մէջ սահմանադիմ ունենալով Սքուլթիլ գետը, որով ստիպուած կըլլային դարձեալ դիմելու Եպիսկոպոսական եկեղեցիներ Կիրակնօթայ պաշտամունքի Համար: Նորթ Ծիլատելիքոյ Հայութեան Համար Կիրակի մը պաշտամունք կ'ունենար 18րդ Տայմընտի և կամ 12րդ և Տայմընտի Եպիսկոպոսական եկեղեցիներուն մէջ. և Կիրակի մըն այ Ուէսթ Ծիլատելիքոյ

Հայոց Համար Յերդ և Հէյրլի Էլթրնտի Եպիսկոպոսական եկեղեցւոյ մէջ: Օրուան հոգեւոր Հովիտն էր Արթ. Տ. Եղիշէ Քննյ. Գալչնճրեան, որուն առաջնորդութեամբ եկեղեցւոյ գնման նոր յանձնախումբը գործի լծուած էր գտնելու Համար սեփական եկեղեցի մը որ կարենար գոհացնել թէ Ուէսթի և թէ Նորթի ժողովուրդը:

Այստեղ չի մտնանք յիշատակել որ 1925-ին Ատ Ծէլոզ Ծրադերնիթի Յօլին մէջ, (65) անդամներու ներկայութեամբ կայացած ընդհանուր ժողովը ընտրեց նոր հոգաբարձական կազմ մը և որոշեց ներքնապէս կազմակերպուել երկու շրջաններուն մէջ ալ միշտ միասնականութեամբ և իրարու զօրավիտ կանգնելով: Նոր հոգաբարձական կազմն էր հետեւեալը. —

Ճրէնք Նահիկեան, Սանթր Սանթրեան, Յարեթ Զարգեան, Վահան Գէրպլերեան, Գրիգոր Կարապետեան, Սահակ Գուռնապեան և Քաշիկ Քէշիշեան:

Հոգաբարձութիւնը այդ տարուան Համար հետեւեալ որոշումները տուած է և հսկած անոնց գործադրութեանը վրայ. —

Տիկնանց Օժանդակ Միութիւնը զօրացնել:

Հրաւիրել Գոստոնէն երգահան Գրն. Գրիգոր Սիւնին դպրաց դասը կազմակերպելու Համար:

Մարմնամարդական Ակումբ ունենայ ղեկավարութեամբ Գրն. Օննիկ Կարապետեանի:

Երաժշտական Ակումբ Գրն. Մինաս Մալումեանի ղեկավարութեամբ:

Դերասանական Ակումբ Գրն. Վահան Գէրպլերեանէ առաջնորդութեամբ:

Ս. Սահակ Ս. Մեսրոպ կիսամսեայ պաշտօնաթերթ տեսչութեամբ Տօթթ. Վոստ Նէտիւրեանի:

1925-ի սկիզբները յարմար տեսնուեցաւ 6006 Ուլնըք փողոցի եկեղեցին ծախու առնել և գայն վերածել աղօթավայրի: Այս առաջարկը բերուեցաւ օրուան հոգաբարձութեան Գրնք. Արամ ձէրբահեան, Տթթ. Վոստ Նէտիւրեան, Տթթ. Մըկրր Յակոբեան, Նա-

Կրթիչ Կիւմբիչկերտանեան, Յովհաննէս Քաշ-
 ճրեան, Յարեթ Զայրզեան եւ Յովհաննէս
 Խլմոյեան: Հոգաբարձութիւնը հրաւիրեց
 Միսական Ընդհ. Ժողով 1927 Մայիսին, որուն
 կը նախագահէր անձամբ Ամերիկէնացոյ Առաջ-
 փեր. Տ. Տիրայր Արքեպիսկոպոս: Նկատելով
 որ նոր եկեղեցւոյ համար ընտրուած վայրը
 Ուէսոյ Ճիւատելիքոյ մէջ էր եւ հետեւարար
 բոլորովին հետու նորթի չըջանի բնակող
 համայնքի անդամներուն համար, այս վերջին-
 ները բացարձակապէս մերժեցին 6006 Ուոյնթ
 փողոցի շէնքը զնկ որպէս եկեղեցի բնահանուր
 Ճիւատելիքոյ հայութեան համար, արդարօրէն
 առարկելով որ իրենց համար աւելի զժուարու-
 թիւն պիտի յարուցուի տեղւոյն հետաւորու-
 թեան պատճառաւ: Ժողովականներ չիրցան
 համաձայնիլ եւ ի վերջոյ բաժանումի գաղա-
 փարներ յայտնուեցան եւ նորթ Ճիւատելիք-
 ցիք պահանջեցին ծախուած եկեղեցւոյ 30.000
 տոլարին կէսը (15.000.00) որպէս իրենց բա-
 ժինը որպէսզի կարենան իրենց սահմաններուն
 մէջ եկեղեցի մը կառուցանել: Գաղտնի քու-
 արկութեամբ որոշուեցաւ զաղութիւն Երկուքի
 բաժանումը: Որոշումը պաշտօնապէս հաղոր-
 ղուեցաւ Առաջնորդարանի Թեմական Խոր-
 հուրդին որ իր կարգին վաւերացուց երկու
 քոյր եկեղեցիներու զոյակցութիւնը նոյն քա-
 ղաքին մէջ: Գարտինք այստեղ շեշտել որ
 բաժանումը պարզ ծխական եւ վարչական
 նկարագիր ունէր, հաշտարար ողիով եւ հաս-
 կացողութեամբ: Երկուքին յարաբերութիւնը
 միշտ եղաւ եղբայրական եւ սիրալիր, քանի որ
 եկուքն ալ նոյն հայրապետահաստատ Առաջ-
 նորդարանի հաւատարիմ համայնքները մնացին
 միշտ, առանձնապէս ենթակայ Ամերիկահայ
 Առաջնորդարանի:

Բաժանումէն անմիջապէս ետք նորթ Ճիւ-
 տելիքոյ համայնքը, վաւերացուած որպէս ա-
 ռանձին ծուխ, կազմեց հետեւեալ առաջին
 վարչութիւնը.—

Հոգաբարձական կազմ

- Յարեթ Զայրզեան
- Արտաշէս Յովսէփեան
- Յովհաննէս Քաշճեան
- Նաղարէթ Կիւմբիչկերտանեան
- Գրիգոր Կարապետեան
- Կարապետ Օղանեան
- Դաւիթ Տէմիրճեան

Երկուքեան Յանձնախումբ

- Յարեթ Զայրզեան
- Մկրտիչ Ղալիկեան
- Հրանդ Սարգիսեան
- Ալիքսան Ալեքսանեան
- Մանուկ Բարունակեան
- Կարապետ Կարապետեան

Գ.—ՆՈՐԹ ԾԻՒԱՏԵԼԻՔՈՅ ՀԱՄԱՅՆՔ
(Առանձին)

(16րդ եւ Օքսֆորտ Ս. Գրիգոր
Լուսաւորիչ Եկեղեցի)

Նորթ Ճիւատելիքոյ համայնքը մէկէ աւելի
 տարիներ կրկին զործածեցին 1927 եւ Տայ-
 մբնտի Եպիսկոպոսական եկեղեցին, մինչեւ որ
 1927 Մարտ 2ին կարողացան զնկ 16րդ եւ
 Օքսֆորտ եկեղեցին, որուն շուրջ 10 փողոց
 ներու մէջ 200է աւելի հայ բնտանիքներ կը
 բնակէին: Օրուան չօրին էր Արթ. Տ. Նշան
 Բինյ. Փափաղեան, իսկ զնման յանձնախումբի
 անդամները Պրնք. Կիւմբիչկերտանեան, Յովհ.
 Քաշճեան, Յարեթ Զայրզեան, Արտաշէս Յով-
 սէփեան, Գարեգին Միրանճաճեան, եւ Պրն.
 Հացազորճեան: Եկեղեցւոյ համար վճարուեցաւ
 55.000.00 տոլար որուն վրայ 10.000.00 տոլար
 եւս ծախսուեցաւ հայկական եկեղեցիի վերա-
 ծելու համար: Շէնքին նորոգութեան ախա-
 տանքներուն շատ մը ազգայիններ կը մասնակ-
 ցին իրենց ձեռքերով: Շէնքի պարտաճուրհակ-
 ներու վճարումը բաւական մտահոգիչ խնդիր
 մը կը դառնայ տիփրէշքնի շրջանին վրայ
 հասնելովը, սակայն կը լուծուի դարձեալ անձ-
 նուէր տիկիներու Աղաւնի Յովսէփեան,
 Մարգրիտ Գաղանճեան, Մարգրիտ Եսայեան,
 զիմումներուն եւ ջանքերուն շնորհիւ:

Եկեղեցին կ'օծուի յանուն Ս. Գրիգոր Լու-
 սաւորիչի, ձեռամբ Առաջնորդ Տ. Տիրայր
 Արքեպ. Տ. Յովհաննիսեանցի: Այս ուրախ
 առիթով Տիար Գրիգոր Կարապետեան 1.000
 տոլար կը նուիրէ, իսկ Տիար Յրէնք Նահիկեան
 1.000 տոլարի նուէրով կնքահայր կը նշանակ-
 ուի: Տիկեանց Միւսիկեան Ատենապետու Տիկ
 Աղաւնի Յովսէփեանի ջանքերով բաւական
 զուամարներ կը գոյանան: 1931-ին Տ. Նշան
 Բինյ. Փափաղեանի տեղ չօրին կը կարգուի
 Յրանսայէն Տ. Պսակ Բինյ. Սարգիսեան:

Նորած եկեղեցւոյ շուրջ համայնքը կը սկսի վերակազմուիլ: Իպրաց եւ սարկաւաղաց դասը զլիսաորութեամբ Պրն. Մինաս Մայումեանի եւ Օրդ. Աղանի Բարուակեանի մասնաւոր փայլ կուտայ պաշտամունքներուն: Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ անունով կը կազմուի Սէյնթ Կրկերից Աթլիթիք Գլուխ - Երիտասարդաց կազմակերպութիւնը, որուն վարիչները ճան Կարապետեան եւ Լեւոն Յակոբեան, իսկ յանձնախումբի անդամները Յարկթ Չարլզեան, Սանթուր Սանթուրեան, Գրիգոր Կարապետեան, կը ջանային երիտասարդութիւնը համախմբել:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին ունէր նաեւ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՅՈՅ, որուն ուսուցչուհիներն էին Տիկ. Աղանի Յովսէփեան, Մարգրիտ Գալանճեան, Արմենուհի Յակոբեան, Վարդանոյ Աղարեան եւ Օրդ. Անահիտ Չարլզեան: (Տես նկար քիւ 3):

Եկեղեցին ունէր նաեւ նուիրեալ ՏԻԿՆԱԿՆՑ ՄԻՈՒԹԻԻՆ մը կազմուած 1927-ին, չեւեալ կազմով —

- Տիկ. Աղանի Յովսէփեան, Ատեմապետուհի
- Մարգրիտ Գալանճեան, Ատեմապետուհի
- Մարգրիտ Ռաչատուրեան, Գանձապահ
- Չարմինէ Ալեքսանեան
- Տիրուհի Մաղպութեան
- Մարգրիտ Եսայեան
- Մէլի Բարունակեան
- Տիկ. Սանթուրեան

1934-ի տխուր զէպքերու շրջանին, երբ Ամերիկահայ Թեմը սկսաւ պառակտուիլ, էջմիածնական հայրապետահաստատ հաւատարիմ համայնքը կորսնցուց իր այս սեփական եկեղեցին եւս եւ հաղիւ եօթը տարի համախմբուած, զարձեալ հոս հոն Ամերիկեան եկեղեցիներու մէջ կատարեց իր պաշտամունքը առաջնորդութեամբ օրուան կորույթի հոգեւոր հովիւ Տ. Արսէն Քչնյ. Թորոսեանի եւ ապա Տէր Յովաննէս Քչնյ. Գալուքճեանի: Համայնքը պարբերաբար զործածեց Պրոտ եւ Սաուրի, 12րդ եւ Տայմընտի, 5րդ եւ Պրթընուտի եւ 12րդ Սրսոուհանայի Ամերիկեան եկեղեցիները 1934-էն մինչեւ 1940: Կարձկ մասնաւորաբար յիշել հայասէր Տքթ. Մ. Հարզը, Պրոտ եւ Սաուրի եպիսկոպոսական եկեղեցւոյ հովիւ որ Երկիցս Ս. էջմիածին այցելած էր եւ սիրով Երկու տարի մեզի տրամադրած էր եկեղեցին Կիրակ-

նօրեայ պաշտամունքի համար: Այս շրջանի հոգեւոր հովիւն էր Արթ. Տ. Արսէն Քչնյ. Թորոսեան, եւ զպրաց դասու ղեկավարներն էին Պրն. Մինաս Մայումեան եւ Օրդ. Աղանի Բարունակեան. իսկ սարկաւաղութիւնը կ'ընէր Պրն. Գրիգոր Օհանեան: 1934-1938 շրջանի հոգաբարձական կազմն էր հետեւեալը —

- Տքթ. Մրկըր Յակոբեան, Ա. պետ
- Դաւիթ Տէմիրճեան, Գալուստի
- Փօլ Գալանճեան
- Յովաննէս Թաշճեան
- Արամ Յովսէփեան
- Կարապետ Անանեան
- Յարկթ Չարլզեան
- Պաղտասար Մանկասարեան

Այստեղ հարկ է զոհունակութեամբ արձանագրել Ռամկ. Աղատ. Կուսակցութեան Ծիլատելիֆիոյ ակումբի ցուցաբերած օժանդակութիւնը երբ 1936-1940 տարիներուն եկեղեցւոյս հոգաբարձութեան տրամադրեցին ակումբի զոյց սրահները ծխական եւ համայնքային ժողովներու, ինչպէս նաեւ ճաշկերոյթներու եւ այլ հաւաքոյթներու համար, առանց որեւէ նիւթական հատուցում ստանալու: Ակումբի վարչութիւնը, հետագային, երբ Մարշըլ փողոցի Ս. Երրորդութիւն եկեղեցին արդէն գնուած էր, փակեց ակումբը եւ բնի ու սրահներու կազմածները ամբողջութեամբ նուիրեց Ս. Երրորդութիւն եկեղեցիին:

Ե. — Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՍԻՆ (Մարշըլ եւ Սըսգուհաննա-ի անկիւնը)

ՕԾՈՒՄ ԵՒ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Եկեղեցւոյ շէնքը, կառուցուած 1881-ին Մարշըլ եւ Սըսգուհաննա փողոցներու անկիւնը, Բողոքական յարանուանութենէ մը կը գնուի Ն. Ծիլատելիֆիոյ Հայ համայնքին կողմէ 1941-ին եւ իսկոյն կը ձեռնարկուի ընդհանուր նորոգութեան: Գնման ծախսն ու նորոգութիւնները կը հասնին \$40.000.000ի:

Սոյն եկեղեցին հանդիսաւոր կերպով կ'օժուի յանուն ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԵԿՆԱՐԻՆ 26 եւ 27. 1942ին ձեռամբ օրուան Ամերիկահայոց Առաջնորդ Փեր. Տ. Գարեգին Արքեպ. Յովսէփեանի, եւ մասնակցութեամբ Կեր. Տ. Յովսէփ Եպիսկ. Կարապետեանի, Արթ. Տ. Յովաննէս Քչնյ. Գալուքճեանի եւ Արթ. Տ.

Քերտիչ ՔՀՆյ. Մինասեանի: Նորած եկեղեցոյ կնքահայր կ'ըլլան Տէր եւ Տիկ. Արամ Աթարեան եւ իրենց զաւակը Մարտիրոս:

Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ սկզբնական շրջանի Հոգաբարձական կազմը կ'ըլլայ ըստ Հետեւեալին.— Գրնք. Մկրտիչ Ղազիկեան, Էտեմապետ. Կարապետ Ինճեան, Տքթ. Մըկրր Յակոբեան, Դաւիթ Տէճիրճեան, Մանուկ Քարունակեան, Փօլ Գաղանճեան եւ Կարապետ Անանեան: Այս խումբն է որ զլիաւորութեամբ Գրն. Մկրտիչ Ղազիկեանի կը յաջողցնէ եկեղեցւոյ գնումն ու վերանորոգումը:

Իսկ Եկեղեցւոյ օժան արարողութեանց իրենց մասնակցութիւնը կը բերեն Նորթի եւ Յէջոյի Դպրաց խումբերը միասնաբար, զլիաւորութեամբ Գրնք. Մինաս Մալումեանի, Դաւիթ Տէճիրճեանի, Գետրոս Փիլիկեանի, Աէժ Ալեանաքեանի, Յակոբ Չոլաքեանի եւ Բարսեղ Քորոսեանի: Դպրաց Դասը կը ղեկավարէ Օրդ. Աղանի Բարունակեան եւ կ'երգեն Օրդ. Շուշանիկ Գալուբճեան, Անահիտ Չալրզեան, Սաքա Գաղանճեան, Գրնք. Երուանդ Իսկէնտերեան եւ Ճորճ Չալրզեան, Երգեչոնի նուազով Օր. Արաքսի Զիրքիճեանի:

Նորած Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ մէջ յաջորդաբար տեղի կ'ունենան Հետեւեալ ուշադրաւ ձեռնարկներն ու հանդիսութիւնները.—

1943-ին կ'օժուի մարմարակերտ Դուրեան Աղբիւրը նուիրատուութեամբ Տէր եւ Տիկ. Օհաննէս Գէլիլեանի եւ կը զետեղուի սրահին մուտքին:

1944-ին Եկեղեցւոյ պարտամուրհակը կ'այրուի մասնաւոր հանդիսութեամբ եւ ճաշկերոյթով, նախազանութեամբ Առաջնորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի:

1945-ին Եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ Ամերիկահայ Թեմի Գատգամաւորական Ժողովը նախազանութեամբ Առաջնորդ Գեր. Տիրան Եպս. Ներսոյեանի:

1946-ին Տիլատեյֆիա կը ժամանէ Երիտասարդ Հոգեւոր Զովի Տ. Քորզում Վրդ. Մանուկեան Երուսաղէմէն: Իր օրով եկեղեցւոյ եւ Համայնքին կեանքը նոր աշխուժութիւն եւ խանդավառութիւն կը ստանայ իր եկեղեցական պաշտամունքով, Դպրաց Դասի կազմակերպութեամբ եւ Երիտասարդաց զործունելութեամբ:

1948-ին Եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ առաջին Քահանայական Զեռնադրութիւնը ձեռամբ Թեմին Առաջնորդ Գեր. Տ. Տիրան Եպս. Ներսոյեանի, որ Բարեչնոր՝ Անդրանիկ Սրկ. Աշճեանը քահանայ կը ձեռնադրէ զայն վերակոչելով Տէր Արտէն Քահանայ:

1950-ին Դարձեալ Առաջնորդ Գեր. Տ. Տիրան Ներսոյեանի ձեռամբ Բարեչնոր՝ Հրանդ Սրկ. Առաքելեան քահանայական ձեռնադրութիւն կը ստանայ վերանուանուելով Տէր Լևոն Քահանայ:

1950-ին Հոգեւոր Զովի Տ. Քորզում Վրդ. Մանուկեան կը սկսի կազմակերպել ՀԱՅ ԴԳՐՈՑ ու կը հրաւիրէ շրջանիս ուսուցիչները զործօն դեր վերցնելու անոր մէջ, զլիաւորութեամբ Գրն. Գետրոս Ալմէրճեանի:

1946-1953 իր. Հովուութեան շրջանին Հոգ. Տ. Քորզում Վրդ. Մանուկեան մեծ գարկ տուած է Դպրաց Դասի կարգադրման, շինել տալով ձայնադրեալ տետրեր, վարելով փորձերն եւ ճշակելով կանոնադրութիւն մը: Բաց աստի Հայր Քորզում կազմակերպած է ԹՈՐԳՈՍԵԱՆՑ ԵՐԳՁՈՒՆՈՒՄԲԸ տեղական ուժերով որ շատ քաջալերիչ էլոյթներ ունեցած է թէ Տիլատեյֆիոյ մէջ եւ թէ օտար շրջանակներու մէջ:

1951-ին Ուայթմարշի հայկական գերեզմանոցի գնումը տեղի ունեցած է Հոգ. Տ. Քորզում Վրդ. Մանուկեանի նախաձեռնութեամբ:

1952-ին Կրտսերներու Դպրաց Դասը կազմակերպուած է Օր. Աղանի Բարունակեանի ղեկավարութեամբ:

1952-ին Եկեղեցւոյ շուրջակայան պաշտօնին կոչուած է Արժ. Տ. Արտէն ՔՀՆյ. Աշճեան եւ յարատեւօրէն աշխատած Համայնքային կազմակերպութիւնները համերաշխ եւ զործօն պահելուն մէջ:

1953 Հուլիս. 25—Եկեղեցւոյ Դպրաց Դասի 25ամեայ Տօնակատարութիւնը տեղի ունեցած է Ամերիկահայոց Առաջնորդ Գեր. Տ. Տիրան Ներսոյեանի նախազանութեամբ: Նոյն տարիներուն ԿԻՐԱՎՆՕՐԵԱՅ ԴԻԳՐՈՑն ալ յառաջդիմութիւն արձանագրուած է:

1954 Հոկտ. 24—Հանդիսաւորապէս նշուեցաւ Առաջնորդ Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեանի քահանայական ձեռնադրութեան 25-ամեակը Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Վարդանանց Սրահին մէջ Ս. Պատարագի մատուցմամբ ձեռամբ Սրբազան Հօր, եւ երեկոյեան ճաշկերոյթով:

1958-ին Առաջնորդ Գեր. Տ. Մամբրէ Արքեպս. Գալֆայեանի ձեռամբ Աւագ Սարկաւազութեան աստիճան ստացաւ Տիրացու Մինաս Մալումեանը ի վարձատրութիւն իր երկարամեայ եւ օգտաշատ ու պատրաստակամ ծառայութեան:

1957 Դեկտ. 10ին Ճիլատելիքի տամանց համայնքի նոր հողեւոր հովիւը Արժ. Տ. Սարգիս Քննյ. Գալղճեան, որ անձամբ ձրոյթ եւ իրեն յատուկ կորովով իր պաշտօնին վրայ մնաց մինչեւ 1963: Իրմէ առաջ կարճ շրջանի համար եւ առժամեայ կերպով հովուութեան պաշտօնը վարեց Արժ. Տ. Պօղոս Քննյ. Մանուկեան որու օրով զնուեցաւ Հետադային շինուելիք նոր եկեղեցւոյ հողը Զէլթրննէճ քաղաքին մէջ — նորթ Ճիլատելիքի:

1960-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհ. Տ. Տ. Վասդէն Ա. իր շնորհարեր այցելութեամբ պատուեց մեր համայնքը: Ծաշ եւ հիւրասիրութիւն եկեղեցւոյ սրբահին մէջ:

1962-ին Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ տիճակոր Փափաղեան եւ տիրացու Եահայ Մինասեան ստացան Աւագ Սարկաւազութեան աստիճան Առաջնորդ Գեր. Տ. Սիրոն Արքեպս. Մանուկեանի ձեռամբ:

1963-ին Փետրուարի 20ին Ճիլատելիքի տամանց համայնքի նոր հողեւոր հովիւը Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Արղումանեան Լոնտոնէն ուր տեղւոյն Համալսարանին մէջ կ'ուսանէր երեք տարիներ ի վեր:

1964-ին Դեկտեմբեր 1ին, ձմեռնային առաւօտ մը անակնկալ կերպով Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ այս շէնքը հրոյ ճարակ կը դառնայ մտամոլոր անձի մը ձեռքերով եւ հիմնայատակ կը կործանի, գժուարութեանց եւ մտահոգութեանց մատնելով ամբողջ Ճիլատելիքի համայնքը: Հոս զոհուեալութեամբ արձանագրելու ենք մեր եկեղեցւոյ երիտա-

սարգ փաստարան Պրն. Ճէք Կուշեանի բերած յաւադոյն օգտակարութիւնը իր ցուցարբերած օրինական բոլոր գործանուութիւններուն մէջ եկեղեցւոյ հրկիւման հետեւանքով յառաջ եկած ապահովագրրայի բարդութեանց կապակցութեամբ:

1964-1966— Համայնքիս եկեղեցական, դրպրոցական եւ վերակազմակերպման անհրաժեշտ աշխատանքները կը կատարուին Ճիլատելիքիոյ ԱՏ ՃԵԼՈԶ որբախրնամ կազմակերպութեան Տան մէջ, Օկանձ Էլթիլի վրայ, զոր այնքան բարեացակամօրէն արամադրեցին մեզի, առանց որեւէ նիւթական հատուցման, միջնորդութեամբը եկեղեցւոյս Աւագ Սարկաւազ Մինաս Մալումեանի:

1965-ին Յունուարի 31ին կատարուեցաւ նորակառոյց եկեղեցւոյ հողի օրհնութիւնը կարգադրութեամբ Առաջնորդ Գերշ. Տ. Սիրոն Արքեպս. Մանուկեանի եւ նախագահութեամբ առաջնորդական փոխանորդ Հոգշ. Տ. Եղիշէ Մ. Վրդ. Կիլիբեանի: Նոյն երեկոյեան տեղի ունեցաւ օրուան ճաշկերոյթը:

Զ.—ԿԱՌՈՒՑՈՒՄ ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՑ

1965-1966 տարիներուն, հովիւ, Հոգաբարձութիւն եւ Երեսմեան Ծանօնատեմբ, կարող առեւտրապետութեամբ Պրն. Սուրէն Բարեջանեանի, ամէն շանք ի գործ դրաւ որ կարճ ժամանակի մէջ եկեղեցւոյ շինարարական աշխատանքները բարակին ու հասնէին իրենց լրումին: Սոյն ձեռնարկին յաջողութիւնը կը պարտինք նաեւ Պրն. Հերրի Գլճեանի եւ իր ծարտարապետական Տան իրենց ընձեռած նուիրատուութեանը:

1965-ին Սեպտեմբերի 26ին տեղի կ'ունենայ նորակառոյց եկեղեցւոյ Անկիւնաքարերու եւ հիմնաքարերու օծման եւ վետեղման արարողութիւնները նախապահութեամբ Առաջնորդ Գերշ. Տ. Սիրոն Արքեպս. Մանուկեանի: Երեկոյեան տեղի կ'ունենայ նաեւ ճաշկերոյթ եւ հաւաքոյթ:

1966-ին Սեպտեմբեր 18ին տեղի ունեցաւ նորակառոյց Ս. Երրորդութիւն Հայոց Եկե-

կեղեցւոյ օժժան արարողութիւնը մեծ խանդավառութեան մէջ ձեռամբ Ամերիկահայոց նորրոտիր Առաջնորդ Գերշ. Տ. Քորզում Եպս. Մանուկեանի: Օժժան կնքահայրութիւնը յանձն առաւ Պրն. Արզաւ Աթթարեան, որդին Պրն. Ծան Աթթարեանի: Եկեղեցին հայկական ճարտարապետութեամբ և գմբէթադարձ կր բարձրանայ բազալի այդ բարձունքին վրայ ի միեկնաբար համայնքին հաւատացեալներուն: Եկեղեցին կ'օժտուի նաև Էլեկտրական դանդակներով սրնոք ամէն կիրակի կը զօղանձեն Հայ Եկեղեցւոյ դանդակն ու շարականները: այս ալ նուէրը Էղաւ Պրն. Հերրի Գլճեանի:

1967-ին Փետրուար 5ին տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը ի պատիւ Ֆիլատելիոյ յարգրուած անձերէն Տիար Հերրի Գլճեանի, եկեղեցւոյս նորակառուց սրահին մէջ, իրեն կատարած բացասիկ ծառայութեանց համար հանդէպ մեր համայնքին: Պրն. Գլճեան գծեր ու նուիրեր էր նոր շէնքերուն յատակադներն ու նաև նրբիրեր էր եկեղեցւոյ դանդակներ: Պրն. Գլճեանի մատուցուեցաւ մասնաւոր ոսկեայ պատուոյ զիբ մը և սրնոյեայ տախտակ մը իր անուան արձանագրութեամբ զոր կետեղեցինք եկեղեցւոյ դաւիթին մէջ: Յատկապէս պատրաստուած պոսոնկեայ տախտակ մ'ըս այ յանձնուեցաւ Եկեղեցւոյս ճարտարապետ Պրն. Ծան Սամելեանի աւ ի դնահատութիւն իր բերած աշխատանքին:

1967-ին Ապրիլ 13ին, ձեռամբ Առաջնորդ Գերշ. Տ. Քորզում Եպս. Մանուկեանի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ ծայրագոյն վարդապետութեան տասը աստիճանները ստացաւ Հովի Տ. Չաւեն վրդ. Արզումանեան, խնդրանքովն ու միջնորդութեամբ համայնքի ծխականներուն: Նոյն Երեկոյեան Առաջնորդ Արքայանք օժեց նաև Եկեղեցւոյս նորակառուց մարմարակերտ Մկրտութեան Աւագանք, յատկապէս պատրաստուած Խոսիոյ մէջ, որպէս յիշատակի նուէր Տէր և Տիկ. Սարգիս Պալատեանի կողմէ:

ՅԵՏԱԴԱՐՉ ԱՄՆԱՐԿ

ՅԱՏԿԱՆՆԵՐԻ ԴԵՊՐԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ա.—Ամենայն Հայոց Կարողիկոսի Շնորհաբեր Այցելութիւնը

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Ե. Ս. Օ. Տ. Տ. Վաղղէն Ա. Հայրապետի այցելութիւնը Ֆիլատելիոյ տեղի ունեցաւ 1966ի Մայիսին բացասիկ խանդավառութիւն տեղով ըստանդակ հայութեան մէջ: Վեհափառ Հայրապետը իր պաշտօնական այցելութիւնը տուաւ համայնքին Ս. Երրորդութիւն Հայ Եկեղեցին ուր Հրաշափառով մուտք գործեց ազօթեց ու օրհնեց հաւատացեալները: Այս եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ և հաւաքոյթ ի պատիւ Նորին Ս. Օժնութեան:

Բ.—Վերակազմակերպման Երջան

1966-ական թուականները առանցքը կը կազմեն մասնաւոր խանդավառութեան և աշխատանքի Էր Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հովի և Հողարարութիւն և Երնութեան Յանձնարար յատուկ ուղարկութիւն զարձուցած են նոր կառուցուելիք եկեղեցւոյ վրայ և աշխատած որ կարելի փութով համայնքին կեդրոնը փոխադրուէր այլ տեղ մը: Սրուան Հովիբ Արք. Տ. Սարգիս Քհնյ. Գաւրղճեան և Երկար տարիներու Միական Խորհուրդի Ատենապետ Պրն. Սարգիս Մանուկեան ջանք շեն խնայած զօրով կանգնելու Երնութեան Յանձնարարներն և անոր առեկապեաներուն, նախ Պրն. Կարապետ Խնձոյեանի, Տէր. Հրանդ Մարգարեանի և այլա Պրն. Վարդան Ծափեանի, որ այդպարծան այդ ձեռնարկը յաջողութեամբ պահուէր: Յիշատակութեան արժանի են ջանքերը Պրն. Սարգիս Մանուկեանի որ իր տասնամեակէ մը աւելի որպէս Ատենապետ իր ծառայութեամբը և նուիրումովը հետապնդեց նորակառուց եկեղեցւոյ գործը:

1966-ին Ֆիլատելիոյ մասանց նոր Հովիբ Հող. Տ. Չաւեն վրդ. Արզումանեան որ իր կարգին զարկ տուաւ եկեղեցական և համայնքային ներքին ուժեղացման դիմադրուել կարենարու համար նոր համայնքին նոր պահանջները: Հողարարական կազմին մէջ այդ շրջա-

նին եղած են նեոեւեայները.—

- Գրնք. Սարգիս Մանուկեան, Ատեմապետ
- Տաճատ Գևորգեան
- Արա Բարսեղեան
- Գևորգ Սէմէրճեան
- Գառնիկ Թովմասեան
- Աւետիս Գունասեան
- Սարգիս Գալուստեան
- Արսէն Խանամիրեան
- Ճէֆ Գասմաճեան
- Վարդան Բարնակեան
- Հէրրի Միրիճանեան

Միեւնոյն տարիներուն Շինութեան Յանձնախումբի մաս կը կազմէին նաեւ նեոեւեայները.— Գրնք. Վարդան Ճափեան, Ատեմապետ, Տքթ. Հրանդ Մարգարեան, Սուրէն Բարեջանեան, Օր. Աղապի Գունձազեան, Ճան Սամբեան, Սարգիս Մանուկեան, Աւետիգ Գունասեան, Գերձ Երկեան, Զարլոյ Անթառամեան, Հէրրի Միրիճանեան, Արսէն Խանամիրեան, Վարդան Բարնակեան, փաստաբան Ճէֆ Կուշեան, Տէլեմար Գասմաճեան եւ ուրիշներ: Եկեղեցւոյ ընդարձակ կալուածք 11 ու կէս արտափար գնուեցաւ այդ օրերուն եւ անկէ վեց տարիներ ետք, երբ նախկին եկեղեցին հրոյ ճարակ դարձաւ, նոր եկեղեցւոյ շինութեան գործերը անյապաղ սկսան, անմիջական օգնութեամբ Գլճեան ճարտարապետական Տան եւ Գրն. Հէրրի Գլճեանի ուղղակի հսկողութեամբ եւ ճարտարապետութեամբ Գրն. Ճան Սամբեանի:

Գ.—ԱՍ ՏԵԼՈՉԷ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Մասնաւոր յիշատակութեան արժանի են «Ատ Տելոչ» որբայինամ Ընկերակցութեան Ճիւղատեղիի վարչութեան անդամները որոնք սիրալոյսով քաղաքի իրենց կեդրոնական շէնքը, Սկանձ փողոցի վրայ, տրամադրեցին մեր համայնքային գործածութեան մօտ երկու տարի առանց որեւէ հատուցումի: Համայնքս պիտի յիշէ միշտ այս նոր օրերու շնորհ Սամարացիները իրենց վեհանձն բարեգործութեանը համար:

Այս շրջանին թլլեւ որբանոցի մէջ, սակայն մեղուաջան աշխատանք տարուեցաւ Հոգաբարձութեան եւ Շինութեան Յանձնախումբի կողմէ գլխաւորութեամբ Հովիսին Հոգչ. Տ. Զաւէն Մ. Վրդ. Արղունանեանի: Ժողովներ անպակաս եղան ժամ առաջ լրացած տեւեկու եկեղեցւոյ, դասարաններու եւ սրահի շինութիւնները, որոնց գլուխը անցեր էր Շինութեան Յանձնախումբի ժրգիւն եւ անձնուէր Ատեմապետը Գրն. Սուրէն Բարեջանեան, որ

իր բարեհամբոյր նկարագրով ու վեհանձն գործով կրցաւ իր շուրջ լաւագոյն համագործակցութիւն ստեղծել ու արագացնել շինութեան գործը: 1955ի Ապրիլին սկսաւ եկեղեցւոյ շինութիւնը եւ ամէն ինչ, եկեղեցի, դասարաններ, խոհանոցն ու ընդարձակ սրահը, իրենց աւարտին հասան 1966 Յուլիսին, երբ որբանոցէն փոխադրուեցանք մեր սեփական տունը ամենամեծ ու բախտութեամբ:

Դ.—ԲԱՌԱՍՆԱՐԵԱՅ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Գասմապրիս Յանձնախումբը պարտք կը համարէ յիշատակել Էրեք անձերու անուններ աւ ի գնահատութիւն իրենց մատուցած քառասուն տարիներու ծառայութեան եւ որոնք տակաւին կը շարունակեն իրենց գործը ամենայն խղճմտութեամբ:

ՄԻՆԱՍ Ա. ՍՐԿ. ՄԱՆՈՒՄԵԱՆ, որ 1927էն ի վեր երիտասարդ տարիքէն սկսեալ որպէս դպիր, դպրապետ եւ Աւագ Սարկաւազ ծառայած է Նորթ Ճիւղատեղիի Ս. Երրորդութիւն համայնքին, հին օրերու ամենալոյսարին ծամանակներուն: Գրն. Մալուսեան սասցած է դպիրի եւ ուրբարակիրի աստիճանները 1952ին ձեռամբ նահատակ Դեւոնդ Դուրեան Արեւայիսկոպոսէն, եւ նետաղային 1958ին այ Աւագ Սարկաւազութեան կարգը ստացած է հանգուցեալ Մամբրէ Արք. Գալֆայեանի: Տակաւին առողջ եւ առողջ իր ծառայութիւնը կը շարունակէ ընդհանրապես իրենց կեղեցիկս ներս:

ՕՐԻՈՐԴ ԱՂԱՆԻ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ, որ 1927էն ի վեր իր անձնուէր ծառայութիւնը բերած է համայնքիս եկեղեցւոյ Դպրաց Դասին, որպէս դպրուհի, դպրապետ եւ այժմ ձեռնահասօրէն կը վարէ եկեղեցւոյս Կիրակնօրեայ Դպրոցի Տեսչութիւնը: Մեր նորահաս սերունդը շատ բան կը պարտի Օր. Բարսեղեանի, որ կրցած է Քրիստոնէական դաստիարակութեան եւ եկեղեցասիրութեան մարդին մէջ կարեւոր դեր կատարել, ջանքերով ուսում եւ կրթութիւն մեր նորահաս սերունդին:

ՏԻԿ. ԱՂԱՆԻ ՅՈՎՍԷՓԵԱՆ, որ 1927էն ի վեր իր նուիրեալ ծառայութիւնը բերած է եկեղեցւոյս հիմնարկութեան, Տիկիանց Միութեան կազմաւորման, ինչպէս նաեւ Կիրակնօրեայ եւ Հայ Դպրոցներու վսեմ աշխատանքներուն մէջ: Տիկին Յովսէփեան այժմ կապրի Էմբրարի ձերանոցին մէջ ու կայտաւ միշտ կանգնած Քրիստոնէական բարձունքի պատնէչին վրայ իր խօսքով ու գրիչով բարոյակով Աւետարանի խօսքը: Ան երբեմն այ տակաւին կ'այցելէ մեր եկեղեցին ու կը մանակցի Տիկիանց Միութեան ժողովներուն: